Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
«04» սեպտեմբեր 2019թ.
թիվ 2414 – Ա հրամանի

# ԾՐԱԳԻՐ

## ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՐԱՊԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 12-ՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Սեպտեմբեր 2019թ. – սեպտեմբեր 2021թ. (տարվա բոլոր ամիսներին, բացի օգոստոս ամսից), ք. Երևան
(«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ)

Հայ օգնության ֆոնդ

| **Թեմա** | **Նկարագիր** | **Տևողություն (յուր. օր** 7 **ժամ**, 1 **ժամ՝** 60**ր.**) | **Պատասխանատու** | **Ակնկալվող արդյունք** |
|---|---|---|---|---|
| 1. Ռևմատոլոգիա, ախտորոշման ժամանակակից մեթոդները և դրանց արդյունքների մեկնաբանությունը, հիվանդների վարման նոր մոտեցումները | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 14 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | Դասընթացի ավարտին մասնակիցները կկարողանան.<br>· Տիրապետել ախտորոշման ժամանակակից մեթոդների հնարավորությունների մասին տեղեկությանը<br>· Ախտորոշել շտապ բուժօգնություն պահանջող թերապևտիկ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2. Գաստրոէնտերոլոգիա (քրոնիկ գաստրոդուոդենիտ, խոցային հիվանդություն, կոլիտ, ստամոքսաղիքային պաթոլոգիաներ կապված ֆերմենտոպաթիաների և աղիքային միկրոֆլորայի շեղումների հետ, վարման ուղեցույցները) | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 14 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | վիճակները<br>· Հիվանդին նշանակել բուժում/ սննդակարգ՝ ժամանակակից ուղեցույցներին համապատասխան, տիրապետել ինհալացիոն թերապիայի մոտեցումներին, ԷՍԳ վերծանման հմտության ավելացում, տրոպոնինի էքսպրես թեստի արդյունքի վերծանման հմտություն<br>· Վարել ծանր, ծայրահեղ ծանր վիճակներում գտնվող հիվանդին<br>· Կիրառել թիմային արդյունավետ հաղորդակցություն՝ հիվանդի անվտանգ և արդյունավետ խնամքը և տեղափոխումն ապահովելու համար |
| 3.Թոքաբանություն/ ալերգոլոգիա (սուր թոքաբորբեր, բրոնխիտ, քրոնիկ հազ, բրոնխիալ ասթմա/ շնչառական ալերգոզներ): Սպիրոմետրիա (կիրառությունը, մեկնաբանությունը), ինհալացիոն թերապիա (կիրառությունը, հմտությունները) | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 14 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4. Նեֆրոլոգիա (սուր գլոմերուլոնեֆրիտ: Ծանոթացում հեմոդիալիզի կլինիկայի աշխատանքների մեթոդներին | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 14 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | |
| 5. Հիպերտոնիկ հիվանդության վարման ժամանակակից մոտեցումները, կանխարգելումը և դինամիկ հսկողությունն առաջնային օղակում սահմանափակ ռեսուրսների պարագայում: Սուր կորոնար համախտանիշ, ախտորոշումն առաջնային օղակում, ԷՍԳ, տրոպոնինային էքսպրես թեստ | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 7 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6.Քրոնիկ սրտային անբավարարություն: Թոքային սիրտ: Թոք-սրտային անբավարարության բուժման սկզբունքները | · Առավոտյան համայց<br>· Հիվանդների քննարկում<br>· Մասնակցություն հետազոտական և բուժական միջոցառումների<br>· Տեսական հարցերի քննարկում | 7 ժամ<br>09:00-17:00 | Կարինե Մարկոսյան | |
| Այցելություն Հանրապետական գիտաբժշկական գրադարան (ՀԳԲԳ) | Ժամանակակից բժշկական գրականության և ամսագրերի ընթերցում | 8 ժամ | Աննա Շիրինյան | |
| ՇՄՁ արդյունքների ամփոփում[1] | Կլինիկական մեկ դեպքի, մեկ հոդվածի (ռեֆերատ) ներկայացում | 2 ժամ<br>10:00-12:00 | Համբարձում Սիմոնյան,<br>Ռոզա Ազարյան | |

1.Որպես ծրագրի բաղկացուցիչ մաս՝ մասնակիցները ներկայացնում են կլինիկական դեպքի նկարագրություն և ռեֆերատ: Այս հանձնարարությունն իրագործելու համար մասնակիցներն օգտվում են Հանրապետական գիտաբժշկական գրադարանի ռեսուրսներից (տպիչներ, համակարգիչներ, համացանց), որոնք ապահովվել են ՀՕՖ-ի կողմից:

**Ընդհանուր նկարագիր** – ՀՀ մարզերից և ԼՂՀ-ից Երևանում վերապատրաստվող բժիշկներն իրենց վերապատրաստման ղեկավարներին ուղեկցում են համայցերի ժամանակ, ինչպես նաև աջակցում են նրանց հիվանդների վարման ընթացքում՝ ներառյալ վիրահատություններն ու պրոցեդուրաներ: Վերապատրաստվող բժիշկները սովորում են նոր մեթոդներ, ծանոթանում նոր տեխնոլոգիաների և գործիքների կիրառմանը, մասնակցում իրենց ոլորտի ամենաթարմ նորամուծությունները ներկայացնող դասախոսությունների և դասընթացների:

Յուրաքանչյուր օրվա ընթացքում նախատեսված է 1 ժամ ընդմիջում, որը ներառված է (09:00-17:00) 8 ժամվա մեջ

**Վերապատրաստման պատասխանատու՝** Կարինե Մարկոսյան

Թիրախային լսարան՝ թերապևտներ, ընտանեկան բժիշկներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 10: